ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 Նոյեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

164
(2830)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ-Ն ՓՈՐՁՈՒՄ Է ՎԵՐԱՀՍԿԵԼ ԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր»-ը նոյեմբերի 16-ին, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, նախաձեռնող խմբի նիստ էր արել: «Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ փակ նիստից: Տեղեկացանք, որ վարչության նիստը 2 ժամից ավելի է տեւել եւ հիմնականում նվիրված է եղել ՔՊ կանոնադրությանն ու կուսակցականների էթիկայի վարքականոններին: Մեր տեղեկություններով՝ պատճառն էլ ՔՊ-ական Թաթուլ Ասիլյանի սկանդալային վարքագիծն է եղել, ինչի պատճառով էլ նա հեռացվել էր կուսակցությունից. հավանաբար, Նիկոլ Փաշինյանը որոշել է դաս տալ ՔՊ-ականներին: ՔՊ վարչության անդամ Ռոմանոս Պետրոսյանը նիստի սկզբում կուսակցության կանոնադրությունն է ընթերցել թիմակիցների համար, խոսել է նրանց պարտականությունների ու էթիկայի կանոններին հետեւելու անհրաժեշտության մասին, խոսել է նաեւ կուսակցաշինության մասին: Թե ինչու հենց Ռոմանոս Պետրոսյանը, ՔՊ-ից ասացին, որ վարչությունն է այդպես որոշել: ՔՊ-ականներին ասվել է, որ չպետք է շեղվեն կուսակցության կանոնադրությունից, խստորեն պետք է հետեւեն դրան եւ չպետք է իրենց վարքով ստվեր գցեն ամբողջ թիմի վրա: Կուսակցության նախաձեռնող խմբի նիստն իր կարճ ելույթով եզրափակել է Նիկոլ Փաշինյանը: Ուշագրավ է նաեւ, որ նախաձեռնող խմբի նիստին նախարարները ներկա չեն եղել:

ՀՀ Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Բաբկեն Թունյանը այն պատգամավորներից եւ քաղաքական գործիչներից է, որը եւս ունի լրագրողական անցյալ: Նա դաշտ է մտել 2018 թվականի հեղափոխությունից հետո: Ուշագրավն այն է, որ հենց 2018 թվականի մայիսի 8-ին, երբ Նիկոլ Փաշինյանն ընտրվեց ՀՀ վարչապետ, Բաբկեն Թունյանը նոր մեքենա է գնել: Այս մասին տեղեկանում ենք Բաբկեն Թունյանի՝ 2023 թվականի մայիսի 31-ին ներկայացրած 2022 թվականի եկամուտների եւ գույքի հայտարարագրից: Մեքենան Mercedes Benz մակնիշի է՝ արտադրված 2004 թվականին: Թունյանը, ըստ հայտարարագրի, ունի մեկ բնակարան բազմաբնակարան շենքում, որը ձեռք է բերվել 1994 թվականին համատեղ սեփականությամբ Դավթաշեն վարչական շրջանում: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 33 մլն դրամ, որին կից նշված է, որ այս գումարը հիփոթեքով ձեռք բերված բնակարանի մայր գումարի մնացորդն է: Թունյանը 2022 թվականի հուլիսից զբաղեցնում է ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնը: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 779 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները 1200 ԱՄՆ դոլար եւ 1 մլն 200 հազար դրամ: Պատգամավորի տարեկան եկամուտները կազմել են 8 մլն 465 հազար դրամ, որից 8 մլն 354 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից, իսկ 111 հազար դրամը քաղաքացիական այլ պայմանագրերից ստացված եկամուտ է ՀՀ պետական կառավարման ակադեմիայից:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նախորդ շաբաթ՝ ԱԺ նստաշրջանի մեկնարկից առաջ, ընդդիմադիր «Հայաստան» դաշինքն ընդլայնված կազմով նիստ է արել՝ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ: Քննարկվել են առաջիկա անելիքները եւ ԱԺ-ում «Հայաստան» ֆրակցիայի մարտավարության հետ կապված հարցեր: Հանդիպման մասին տեղեկությունը մեզ հետ զրույցում հաստատեց նաեւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ագնեսա Խամոյանը. «Այո՛, «Հայաստան» խմբակցության պատգամավորները հանդիպել են «Հայաստան» դաշինքի ղեկավար, երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Հաստատում եմ ձեր տեղեկությունը, ուզում եմ նաեւ ընդգծել, որ այստեղ զարմանալու ոչինչ չկա, քանի որ նման հանդիպումները պարբերական բնույթ են կրում»: Հիշեցնենք, որ Ռոբերտ Քոչարյանի որդին՝ Լեւոն Քոչարյանը, նոյեմբերի 6-ին ԱԺ պատգամավորի մանդատ ստացավ, իսկ արդեն նոյեմբերի 14-ի ԱԺ նիստում պաշտոնապես երդմամբ ստանձնեց պատգամավորական լիազորությունները:

Ներքին գործերի նախարարությունը նախագիծ է ներկայացրել բենզալցակայանների եւ ավտոցիստեռների շահագործման պայմանների վերաբերյալ: Ըստ այդմ՝ մի քանի կանոններ պետք է ապահովվեն, օրինակ՝ նախքան շինարարական աշխատանքներ սկսելը սեփականատերը կամ շահագործող անձը դիզայնի ծրագիրը (էսքիզ) պետք է ներկայացնի Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմին համապատասխան եզրակացություն ստանալու նպատակով: Մյուս կետով՝ կառուցման ժամանակ պետք է նախատեսել բոլոր մեխանիզմների, սարքավորումների, ավտովառելիքի պահեստարանների ու բաքերի, խողովակաշարերի, վառելիքաբաշխիչ աշտարակների եւ այլնի պաշտպանվածությունը ցանկացած տեսակի վնասվելու ռիսկից: Հիմնավորման մեջ նշվում է, թե նման նախագծի հիմք են հանդիսացել վերջին շրջանում շատացած դեպքերը:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՑԱԽԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանն է:

-Պարոն Մոսիյան, տեղեկություններ կան, որ Արցախի ԱԺ պատգամավորները Հայաստան տեղափոխվելուց հետո մտադիր են այստեղ ԱԺ նիստ հրավիրել, քննարկել իրենց առաջիկա անելիքները, ինչպես նաեւ Արցախի ինքնորոշման հարց բարձրացնել, սակայն ԱԺ փոխնախագահ Բաղունցը չկա, որը պետք է նիստ նախաձեռնի:

-Բաղունցը կա, բոլոր պատգամավորները տեղում են, իսկ նիստ հրավիրելու մասով չեմ ուզում խոսել. երբ անենք, բոլորդ կիմանաք, նախապես չեմ ուզում խոսել:

-Այսինքն՝ խոսե՞լ եք նրա հետ, քննարկե՞լ եք ԱԺ նիստ հրավիրելու հարց:

-Տեսել եմ նրան ու խոսել եմ նրա հետ, բայց նիստի մասին ոչինչ չեմ ուզում ասել, փակագծեր չեմ բացելու:

-Պարոն Մոսիյան, իսկ այս իրավիճակում Արցախի ինքնորոշման հարց բարձրացնելը հավանական համարու՞մ եք, ի՞նչ կտա այն:

-Իրադարձություններից առաջ չընկնենք. երբ նման քննարկում լինի, տեղյակ կպահենք:

-Պարոն Մոսիյան, Հայաստանի իշխանությունների ներկայացուցիչները հայտարարում են, թե Հայաստանում Արցախի պետական կառույցների եւ ինստիտուտների պահպանումը վտանգ է Հայաստանի Հանրապետության համար: Ի՞նչ վտանգի մասին են խոսում նրանք:

-Ես կարծում եմ՝ նման հայտարարություններն իրենք են վտանգ ներկայացնում Հայաստանի եւ հայ ժողովրդի համար:

Ոչ մի վտանգ էլ չի ներկայացնում, դա իրենցից պետք է հարցնեք՝ ինչում է կայանում վտանգը:

-Կարո՞ղ ենք ենթադրել, որ վախենում են Ադրբեջանի իշխանությունների հայտարարություններից:

-Իրենց պետք է հարցնել՝ ինչից են վախենում, ես որեւէ վտանգ չեմ տեսնում. թե տեսնում են, թող իրենք ասեն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՅՈՒԴԱՐՁ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Երեւանի ավագանու խմբակցությունները պատրաստվում են ավագանու նոյեմբերի 21-ի նիստին:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Հայկ Մարությանի «Ազգային առաջընթաց» կուսակցությունը երկուշաբթի է խմբակցության նիստ անելու, որպեսզի վերջնական որոշում կայացնեն ավագանու նիստին մասնակցության վերաբերյալ:

Մեր տեղեկություններով՝ «Ազգային առաջընթաց»-ը մտադիր է մասնակցել նիստին, իսկ ֆրակցիայի նիստին որոշում կկայացնեն Հայկ Մարությանի մասնակցության մասով:

Ավագանու նիստի նախօրեին՝ երկուշաբթի օրը, նիստ կանի նաեւ «Մայր Հայաստան» դաշինքը:

Հիշեցնենք, որ օրերս «Մայր Հայաստան» դաշինքի ղեկավար Անդրանիկ Թեւանյանը հայտարարել էր ավագանու անդամի մանդատը վայր դնելու մասին. խմբակցությունը կղեկավարի Մանուկ Սուքիասյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ավագանու ՔՊ խմբակցությունը չորեքշաբթի է նիստ արել, իսկ «Հանրապետություն»-ը ֆրակցիայի նիստ կանի այսօր:

Քաղաքապետարանից տեղեկացանք նաեւ, որ ավագանու նոյեմբերի 21-ի նիստի օրակարգում 17 հարց է ընդգրկված:

ՌՈՒԲԻՆՅԱՆԸ՝ ԲԻԾՔԵԿՈՒՄ

«Ադրբեջանը ներկայումս օկուպացրել է Հայաստանի շուրջ 200 քառ. կմ տարածք»,- ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի 56-րդ լիագումար նիստում հայտարարել է ՀՀ ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը:

«Հայաստանի տարածքային ամբողջականության դեմ լայնածավալ ռազմական գործողությունների, ինչպես նաեւ Ադրբեջանի կողմից վերջին երեք տարիների ընթացքում իրականացված սողացող ռազմական օկուպացիայի մարտավարության արդյունքում օկուպացվել է Հայաստանի Հանրապետության շուրջ 200 կմ ինքնիշխան տարածք»,-ասել է Ռուբինյանը:

Նրա խոսքով՝ Հայաստանը շարունակում է աշխատել Ադրբեջանի հետ խաղաղության համաձայնագրի եւ հարաբերությունների հաստատման ուղղությամբ, սակայն պնդում է, որ այդ համաձայնագրում ճանաչվեն երկրի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը, ինչպես նաեւ Երեւանի իրավասության սկզբունքները տարածաշրջանում հաղորդակցությունների ապաշրջափակման դեպքում:

Հայաստանի դիրքորոշումը նույնն է մնում՝ խաղաղ հարաբերությունների հաստատում՝ հիմնված երեք համաձայնեցված սկզբունքների վրա: Առաջին սկզբունքն ասում է, որ Հայաստանն ու Ադրբեջանը միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչում են համապատասխանաբար 29,8 հազար եւ 86,6 հազար քառ/կմ-ի սահմաններում:

Երկրորդ սկզբունքը՝ սահմանների սահմանազատումն ու սահմանագծումը, պետք է իրականացվեն՝ 1991թ.-ի Ալմա-Աթայի հռչակագրին համապատասխան, 1974-1990թթ.-ի խորհրդային քարտեզների հիման վրա: Հայաստանն ու Ադրբեջանը միմյանց նկատմամբ տարածքային պահանջներ չունեն եւ պարտավորվում են հետագայում եւս որեւէ պահանջ չառաջադրել:

Երրորդ սկզբունքը վերաբերում է տարածաշրջանային հաղորդակցությունների ապաշրջափակմանը՝ այն երկրների ինքնիշխանության, իրավասության եւ օրենսդրության շրջանակներում, որոնցով դրանք անցնում են:

Ո՞Վ Է ՆՈՐ ԱՆԴԱՄԸ

Օրերս հայտնի դարձավ, որ «Մայր Հայաստան» դաշինքի ղեկավար Անդրանիկ Թեւանյանը վայր է դրել ավագանու անդամի մանդատը:

Ավագանու «Մայր Հայաստան» ֆրակցիան կղեկավարի Մանուկ Սուքիասյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վերջինս «Առաքելություն» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ է եղել:

Սա այն քաղաքական ուժն է, որը 2018թ.-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ ձեւավորեց «Իմ քայլը» դաշինքը եւ մասնակցեց Երեւանի ավագանու, ապա Ազգային ժողովի ընտրություններին:

Ավելի ուշ նա լքել էր «Առաքելություն» կուսակցությունը եւ կոչ է արել Փաշինյանին հրաժարական տալ:

2021 թվականի ապրիլի 30-ին Մանուկ Սուքիասյանը հիմնադրել է «Ինտելեկտուալ Հայաստան» կուսակցությունը:

«Ինտելեկտուալ Հայաստան»-ն Անդրանիկ Թեւանյանի «Մայր Հայաստան»-ի հետ դաշինքով մասնակցեց Երեւանի ավագանու վերջին ընտրություններին:

Այժմ Մանուկ Սուքիասյանը ղեկավարում է ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությունը:

ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺՈՎ ՃԱՆԱՉՎԵԼ Է

Նոյեմբերի 15-ին Հայաստանը պաշտոնապես ծանուցել է Միջազգային քրեական դատարանին, որ, Հռոմի ստատուտի 12-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով, հետադարձ ուժով ճանաչում է 6, 7 եւ 8-րդ հոդվածների իրավազորությունը 2021 թվականի մայիսի 10-ից: ՄՔԴ-ն հրապարակել է «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործով ժամանակավոր միջոցների վերաբերյալ իր որոշումը: Դատարանը հիմնավոր է համարում, որ 2023թ. սեպտեմբերի 19-ի գործողությունների արդյունքում Ադրբեջանը խախտել է էթնիկ ծագմամբ հայերի որոշ իրավունքներ: Դատարանը հետեւաբար հիմնավոր է համարում, որ կապ կա ծագումով հայերի իրավունքների եւ Հայաստանի Հանրապետության կողմի դիմումի, այն է՝ ժամանակավոր միջոցների կիրառման համար: Ըստ այդմ՝ Միջազգային քրեական դատարանը որոշել է ժամանակավոր միջոցները կիրառել, առ այն՝ որ Ադրբեջանը պարտավոր է ապահովել Լեռնային Ղարաբաղից հեռացածների վերադարձը: Ապահովել, որպեսզի մարդիկ, որոնք մնացել են ԼՂ-ում, ցանկության դեպքում լքեն այն: Ապահովել, որպեսզի այն անձինք, որոնք մնում են ԼՂ-ում 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո կամ վերադարձել են, զերծ մնան ուժի գործադրումից կամ ահաբեկումից, որը կարող է նրանց հեռանալու պատճառ դառնալ:

ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երեւանում ամանորյա զարդարանքները փակցնելու ակտիվ աշխատանքներ են ընթանում: Հանրապետության հրապարակում տեղադրում են Ամանորի խորհրդանիշ եղեւնին: Երեւանի քաղաքապետարանից հայտնում են, որ 2023-2024 թվականի ամանորյա զարդարանքների համար հատկացվել է 202 մլն 406 հազար դրամ գումար՝ գրեթե 500 հազար ԱՄՆ դոլար:

Ինչպես անցած տարի, այս տարի եւս այն իրականացվել է մեկ անձից գնման եղանակով: Երեկ փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանն ասուլիսի ընթացքում նշեց, որ չի բացառում, որ անհրաժեշտություն կարող է լինել ֆինանսական հավելյալ միջոցներ տրամադրել, սակայն խուսափեց գումարի հստակ չափ նշել: Այս ամենը քաղաքացիների շրջանում անհանգստություն է առաջացրել, որ կարիք չկար նման մեծամասշտաբ տոնակատարություն իրականացնել եւ միլիոններ հատկացնել այն դեպքում, երբ 21-րդ դարում 2023 թվականը պատմության մեջ գրվեց Արցախը ունենալու վերջին եւ այն կորցնելու առաջին տարին:

Նախորդ տարիներին, օրինակ՝ 2018 թվականին, ամանորյա զարդարանքների համար ծախսվել է 222 մլն ՀՀ դրամ, 2019-ին՝ 355 միլիոն դրամ: Ըստ պետական գնումների armeps.am համակարգի՝ Երեւանի քաղաքապետարանի եւ «Սինեմարտ» ՍՊԸ-ի միջեւ պայմանագիրը կնքվել է 2023թ. նոյեմբերի 7-ին:

Ըստ պայմանագրի՝ այդ ընկերությունը մայրաքաղաքում տեղադրելու է տոնական լուսավորության սարքավորումներ: Հարկ է նշել, որ այս ընկերությունը Երեւանի ամանորյա ձեւավորումը կատարել էր նաեւ նախորդ տարի, կրկին՝ առանց մրցույթի:

Այդ ժամանակ տոնական ձեւավորման համար հատկացվել էր 191 միլիոն դրամ: «Սինեմարտ» ՍՊԸ-ն, ըստ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, հիմնադրվել է 2008 թվականի հոկտեմբերի 23-ին: Ընկերության տնօրենն ու 100 տոկոս բաժնեմասի սեփականատերը Հանրային հեռուստաընկերության ռազմավարական ծրագրերի ղեկավար Ռուբեն Շահինյանն է: Քաղաքացիների մի մասը կողմ է, որ, ամեն դեպքում, արժե նման ծախսեր կատարել, եւ ինչո՞ւ պետք է Երեւան քաղաքը չունենա ամանորյա զարդարանք: Այսպիսով, սպասենք գնումների նոր գործընթացների՝ տեսնելու համար, թե որքան կավելանա նախանշված 202 միլիոն դրամը:

ՄԻԱՁԱՅՆ

ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼԱՓԱԿԵԼ Է

ԱՄՆ Սենատը նոյեմբերի 16-ին ընդունել է Միշիգանը ներկայացնող սենատոր Գարի Փիթերսի հեղինակած՝ «Հայկական դաշտանության ակտ» օրինագիծը, որի նպատակն է 2024 եւ 2025թթ. համար չեղարկել «Ազատության աջակցության ակտի» 907-րդ հոդվածի (907-րդ բանաձեւ) ամենամյա չեղարկման նախագահական իրավասությունը, ինչի արդյունքում Ադրբեջանը կզրկվի ամերիկյան ռազմական օժանդակությունից: Այս քվեարկությունը տեղի ունեցավ Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի, հայ համայնքի, վերջինիս կոնգրեսական բարեկամների, ԱՄՆ-ում բնակվող այլ ժողովուրդների համայնքային կազմակերպությունների շարունակաբար աճող հասարակական ու քաղաքական երկարատեւ ճնշման դարագայում:

Մեկնաբանելով օրինագծի ընդունումը՝ Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի կենտրոնական գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը մասնավորապես նկատել է. «Մենք շնորհակալություն ենք հայտնում սենատոր Փիթերսին իր առաջնորդության համար եւ ողջունում ենք Սենատի կողմից օրինագծի ընդունումը՝ որպես Արցախի ցեղասպանության համար Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելուն եւ Հայաստանի նկատմամբ նոր ագրեսիան զսպելուն ուղղված առաջին քայլ: Իր հերթին, նախագահ Բայդենը, հաշվի առնելով իր դերը Արցախի էթնիկ զտման գործընթացում Ադրբեջանին զինելու գործում, այս պահին պետք է անի շատ ավելին, քան պարզապես ազդարարի ԱՄՆ գործող օրենսդրության կիրառման պատրաստակամության մասին, օրինակ՝ ԱՄՆ-ն կարող է առաջնորդել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւ՝ հաստատելու միջազգային մանդատ, որը կապահովի հայության անվտանգ եւ կայուն վերադարձ դեպի Արցախ»:

Օրինագծի ներկայացման ժամանակ սենատոր Փիթերսը մանրամասնորեն ներկայացրել է Արցախի դեմ ադրբեջանական ագրեսիան՝ սկսած շուրջ տասնամյա շրջափակումից մինչեւ սեպտեմբերի 19-20-ի ռազմական ագրեսիա: Վկայակոչելով այն, որ նախագահ Բայդենը Ադրբեջանի շարունակապես աճող ագրեսիայի պարագայում չի դադարեցրել վերջինիս տրամադրվող օժանդակությունը՝ Փիթերսը Սենատի իր գործընկերներին հորդորել է գործել՝ ասելով. «Եթե մենք քայլեր չձեռնարկենք, երբ երկրները դիտավորյալ անտեսում են իրենց հետ մեր համաձայնագրերի պայմանները, մեր համաձայնագրերը կդառնան իրականում անիմաստ եւ անատամ: Ես կոչ եմ անում իմ գործընկերներին միանալ ինձ՝ Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու համար, գործադրելու մեր պայմանավորվածությունները եւ չիրահրված ագրեսիայի պայմաններում կանգնելու հայ ժողովրդի կողքին»:

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը, հայ համայնքի ակտիվ ներգրավմամբ, շարունակելու է աշխատանքը «907-րդ բանաձեւի» ամբողջական կիրարկումն ապահովելու համար՝ խրախուսելով ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում երկու օրինագծերի անհապաղ ընդունումը, որոնք կարգելափակեն ԱՄՆ ռազմական օժանդակությունն Ադրբեջանին՝ ամբողջությամբ չեղարկելով «907-րդ բանաձեւի» շրջանցման նախագահական լիազորությունները: Ներկայացուցիչների պալատում գտնվող օրինագծերի նախագծերով նաեւ առաջարկվում է ընդլայնել Հայաստանին տրամադրվող հումանիտար եւ ռազմական օժանդակությունը՝ի պատասխան Հայաստանի դեմ Ադրբեջանի շարունակվող ագրեսիայի, ինչպես նաեւ օգնություն ցուցաբերել Արցախից բռնի տեղահանված հայությանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՍՏԱՏԵԼ Է ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովից հայտնում են՝ ի պատասխան նախագահ Անդրանիկ Քոչարյանի 13.11.2023 թ. գրության՝ Սամվել Շահրամանյանը հաստատել է իր մասնակցությունը 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովի աշխատանքներին:

ՀԱՊԿ–Ի ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾ ԵՐԿՐՆԵՐԸ

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) երկրները շահագրգռված են «Ադյուտանտ» ունիվերսալ թիրախային ուսումնական համալիրի ձեռքբերմամբ: Այս մասին հայտարարել է Իժեւսկի «Կուպոլ» էլեկտրամեխանիկական գործարանի գլխավոր տնօրեն Ֆանիլ Ջիյադդինովը, որին մեջբերում է «ՏԱՍՍ»-ը:

Նա նշել է, որ ընկերությունը շարունակում է ընդլայնել «Ադյուտանտ» համալիրի տեսականին եւ հնարավորությունները, որի գնման համար հետաքրքրություն է դրսեւորվում արտասահմանյան գործընկերների կողմից: «ՀԱՊԿ երկրներից մատակարարումների նկատմամբ հետաքրքրություն կա»,- ասել է Ջիյադդինովը՝Dubai Airshow 2023 միջազգային օդատիեզերական ցուցահանդեսի շրջանակներում:

«Ադյուտանտ» համալիրը հակաօդային պաշտպանության անձնակազմի պատրաստման ամենաժամանակակից թիրախային համակարգերից է:

ՊՆ–Ի ԽՆԴՐԱՆՔԸ

Կառավարությունը նոյեմբերի 17-ին գույք հետ վերցնելու եւ ամրացնելու մասին որոշում կայացրեց:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ ՀՀ պաշտպանության նախարարը դիմել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարին՝ խնդրելով ճանապարհահատվածների հիմանորոգման աշխատանքների ընթացքում ապամոնտաժված արգելափակոցները, երկաթբետոնյա կանգնակները հանձնել ՀՀ պաշտպանության նախարարությանը:

Հետեւաբար որոշվել է Մ-2, Երեւան - Երասխ - Գորիս - Մեղրի - Իրանի Իսլամական Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի կմ131+500-կմ139+000,կմ142+000-կմ150+700, կմ150+700-կմ167+600, կմ182+532-կմ190+000, կմ196+000-կմ202+200 հատվածների եւ Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի կմ97+020-կմ104+700 հատվածի հիմանորոգման աշխատանքների շրջանակներում ապամոնտաժված ճանապարհային տարրերն ամրացնել ՀՀ պաշտպանության նախարարությանը:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵՑ

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ՝ ԱԶԳԱԿԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ավարտվել է Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի բնակչի կողմից ինքնաշեն հրազենի գործադրմամբ համագյուղացու նկատմամբ սպանության փորձ կատարելու դեղքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ ՔԿ Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժնում իրականացված քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ հիշյալ բնակավայրի բնակիչ Ա.Պ.-ն, տեւական ժամանակ անձնական հարցերի պատճառով իր ազգական Կ.Պ.-ի հետ լինելով թշնամական հարաբերությունների մեջ, վերջինիս սպանելու նպատակով պատրաստել է ինքնաշեն՝ 12 մմ տրամաչափի որսորդական փամփուշտ կրակելուն հարմարեցված, մահակի մեջ քողարկված ատիպիկ հրազեն:

2023թ. հունիսի 3-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, վերցնելով հիշյալ ինքնաշեն հրազենը՝ Ա.Պ.-ն գնացել է Գեղհովիտ բնակավայրում գտնվող խանութի մերձակա տարածք, որտեղ կայանված վիճակում տեսել է Կ.Պ.-ի ավտոմեքենան: Հասկանալով, որ վերջինս խանութում է, մտել է ներս եւ Կ.Պ.-ին կանչել խանութի կողային հատվածում գտնվող սենյակ: Այնուհետեւ, իր ընտանիքի բարի համբավն արատավորելու հետեւանքով առաջացած վրեժի շարժառիթով, իր կողմից պատրաստված վերոնշյալ հրազենով Կ.Պ.-ին կյանքից զրկելու դիտավորությամբ մեկ անգամ կրակել է վերջինիս ձախ ուսային հատվածին: Կարծելով, թե Կ.Պ.-ն մահացել է, նա հրազենը թողել է դեպքի վայրում եւ հեռացել: Կ.Պ.-ն՝ հրազենային վիրավորումով, տեղափոխվել է Մարտունու բժշկական կենտրոն, որտեղ հաջողվել է փրկել նրա կյանքը:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Գեղհովիտ բնակավայրի բնակիչ Ա.Պ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով, 336-րդ հոդվածի 1-ին մասով եւ 44-155-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԴԱՏԱՎՈՐԻ ՈՐԴՈՒՆ ՍՊԱՍՎԵԼԻՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ոստիկանության նախկին գնդապետ Վարդան Նադարյանի որդու դանակահարության գործով ուշագրավ զարգացումներ են:

Մեզ հայտնի դարձավ, որ ՀՀ քննչական կոմիտեն կարճել է միջադեպի մասնակիցներից մեկի նկատմամբ քրեական հետապնդումը՝ արդարացման հիմքով: Փաստաբան Մարինե Ֆարմանյանը հաստատեց՝ նշելով, որ արդարացվել է իր պաշտպանյալը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ոստիկանության նախկին գնդապետ Վարդան Նադարյանի որդու դանակահարության գործով անցնում է նաեւ Սահմանադրական դատարանի դատավոր Արթուր Վաղարշյանի որդին՝ Արեգ Վաղարշյանը:

Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ նա ձերբակալվել է, ավել ուշ դատարանը Արեգ Վաղարշյանին ազատ էր արձակել:

Հիշեցնենք, որ տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթն անձամբ փորձել էր պարզել ՍԴ դատավոր Արթուր Վաղարշյանից, ինչին ի պատասխան՝ նա ասել էր. «Իմ որդին իրականում այնտեղ ներկա է եղել, ինքը ականատես է: Ես բոլոր պետական մարմիններին վստահում եմ, իրենք օբյեկտիվ քննություն կիրականացնեն, եւ դուք օբյեկտիվ ճշմարտությունը կիմանաք»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 16-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, ուշագրավ իրավիճակ է եղել Աբովյան քաղաքի դատարանում:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դատական նիստի ժամանակ Սեւան քաղաքի՝ 1971 թվականի ծնված բնակչի եւ Պռոշյան համայնքի մեկ այլ բնակչի միջեւ տեղի է ունեցել վիճաբանություն, որը շարունակվել է նաեւ դատարանի բակում:

Դատարանից հեռանալուց հետո կողմերը Արզնու խճուղում կանգնեցնում են իրենց հակառակորդին ու թեժ ծեծկռտուք սկսում, որի ժամանակ դանակով հարվածում են միջադեպի մասնակիցներից մեկին:

Արզնու խճուղում երթեւեկությունը կաթվածահար է լինում: Դանակահարվածին տեղափոխում են հիվանդանոց: Մեզ հայտնի է դարձել վիճաբանության բուն պատճառը:

Սեւանի բնակչի որդին ամուսնացել է Պռոշյանի բնակչի դստեր հետ: Դատական նիստը կապված է եղել թոռան խնամակալության հետ: Գիշերը դանակահարողին իրավապահները բռնել են, նա ձերբակալված է:

ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել երեկ ԵՊՀ-ում տեղի ունեցած պայթյունից տուժածների անունները: Այսպիսով, հիվանդանոց տեղափոխված անձանցից մեկը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՊԾ առաջին գումարտակի 2-րդ վաշտի լեյտենանտ Հայկ Ղազարյանն է՝ ծնված 1990 թվականին. վերջինս ծխահարվել է եւ այս պահին գտնվում է հիվանդանոցում: Մյուս տուժածները ԵՊՀ աշխատակիցներ Սեյրան Բիչախչյանն է՝ ծնված 1953 թվականին, Ահարոն Հակոբյանը՝ ծնված 1957 թվականին: Իսկ, ահա, պայթյունի հետեւանքով մահացածը Երեւանի բնակիչ Ժորժիկ Խաչատրյանն է՝ ծնված 1950 թվականին Երեւանում: Իսկ ինչ վարկած է քննվում այս պահին իրավապահ համակարգում: «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն եւ ըստ նախնական վարկածի՝ Ս. Բիչախչյանը Երեւանի պետական համալսարանի նկուղային հարկում իրեն անհայտ ծագման նյութը փակ տարայից դատարկել է դույլի մեջ, ինչի հետեւանքով էլ առաջացել է այս պայթյունը: Հետեւենք քննության ընթացքին: Հիշեցնենք, որ երեկ առավոտյան ԵՊՀ-ում պայթյուն էր տեղի ունեցել, որին զուգահեռ հրդեհ էր բռնկվել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅԹՅՈՒՆ՝ ԵՊՀ-ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ քննչական կոմիտեում ոստիկանությունից հաղորդում է ստացվել այն մասին, որ, ըստ ստացված ահազանգի, Երեւանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետում տեղի է ունեցել պայթյուն, կան տուժածներ:

ՔԿ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ դեպքի վայրից «ծխահարված» ախտորոշմամբ Համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել ոստիկանության մեկ ծառայող, իսկ երկու անձինք, որոնցից մեկը 70 տարեկան է, մյուսը՝ 66 տարեկան, «պոլիտրավմա, քիմիական այրվածք» ախտորոշմամբ բուժօգնության են տեղափոխվել Այրվածքաբանական ազգային կենտրոն:

Դեպքի վայրում՝ նշված ֆակուլտետի նկուղային հարկում, հայտնաբերվել է 73-ամյա Ժ. Խ.-ի դին՝ այրվածքներով:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երկրորդ բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածի 2-րդ մասով (Շինարարական, լեռնահանքային կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնները կամ պահանջները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանք), ինչպես նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 357-րդ հոդվածի 2-րդ մասի (Հրդեհային անվտանգության կանոնները կամ պահանջները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանք) հատկանիշներով:

Ձեւավորվել է քննչական խումբ, սկսվել է նախաքննություն:

Ներկա պահին քննիչները դեպքի վայրում են, իրականացվում է դեպքի վայրի զննություն, կատարվում են անհրաժեշտ այլ անհետաձգելի քննչական, վարութային գործողություններ՝ կատարվածի պատճառները, դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու, տեղի ունեցածին վերջնական իրավական գնահատական տալու ուղղությամբ:

Նախաքննության ընթացքի եւ արդյունքների մասին ՀՀ քննչական կոմիտեն հընթացս հանդես կգա պաշտոնական տեղեկատվությամբ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 16-ից 17-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 60 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԹԱՔՑՆՈՒՄ Է ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԹԻՎԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը այս տարվա օգոստոսի 29-ին մարզպետարանում նիստ է անցկացրել Տավուշի մարզում անտառային եւ բուսածածկ տարածքների հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաեւ դրանց հետեւանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի հետ, քննարկվել են անտառային հրդեհների, փայտածուխի արտադրման հետ կապված հարցեր:

«Ժողովուրդ» օրաթերթը սեպտեմբերի 8-ին մարզպետին տեղեկատվական հարցում է ուղարկել՝ նրան հարցնելով, թե մարզում փայտածուխի քանի արտադրամաս է գործում, դրանցից քանիսն են համապատասխանում բնապահպանական եւ հակահրդեհային կանոններին:

Սեպտեմբերի 18-ին մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Մարզում գործում են փայտածուխի արտադրամասեր, որոնց թիվը հստակ չենք կարող ասել, քանի որ ամենօրյա փոփոխությունների են ենթարկվում՝ կապված գործունեության դադարեցման հետ: Այն արտադրամասերը, որոնք չեն համապատասխանում բնապահպանական եւ հակահրդեհային կանոններին, ենթարկվում են վարչական պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով»:

Սեպտեմբերի 22-ին նոր հարցում ենք ուղարկել մարզպետ Հ. Ղալումյանին՝ խնդրելով հայտնել մարզում գործող փայտածուխի արտադրամասերի թիվը կոնկրետ օրվա՝ 2023թ. սեպտեմբերի 22-ի դրությամբ:

Մարզպետարանից ստացել ենք նախկինում ուղարկված նույն պատասխանը: Նոյեմբերի 8-ին մարզպետին ուղղված տեղեկատվական հարցման մեջ հարցրել եմ՝ 2023թ. նոյեմբերի 10-ի՝ ժամը 10:00-ի դրությամբ թվով որքան են Տավուշի մարզում գործող փայտածուխի արտադրամասերը, նրանցից քանիսն են համապատասխանում բնապահպանական եւ այլ պահանջներին, գործում են օրինական: Մարզպետարանից ստացված նամակում տառացիորեն, առանց մի բառի տարբերության, նույն պատասխանն է, ինչ որ գրված էր սեպտեմբերի 18-ին մարզպետարանից ուղարկված պատասխանում:

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշումով 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը համառորեն թաքցնում է մարզում գործող փայտածուխի արտադրամասերի թիվը եւ այն, թե դրանցից քանիսն են օրինական, համապատասխանում բնապահպանական պահանջներին: Կարելի է ենթադրել, թե նա ինչու է թաքցնում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԹՎԵՐ

ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կամ արտաղաստվիրակմամբ տարեցների համար գործող 6 խնամքի հաստատություններում բնակվում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 83 տարեց:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին Հումանիտար կենտրոնում կայացած ասուլիսում հայտնել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթեւիկ Ստեփանյանը՝ մանրամասնելով, որ նրանցից 17-ը Ստեփանակերտի տարեցների խնամքի հաստատությունից են տեղափոխվել:

«Տարեցներից 50-ը միայնակ է, ինչը նշանակում է, որ նրանք չունեն ընտանիքի անդամներ եւ հավանաբար կշարունակեն խնամք ստանալ տարեցների խնամքի հաստատություններում: Մենք այս մեկ եւ ավել ամիսների ընթացքում ունեցել ենք վերամիավորումներ: Բռնի տեղահանման ընթացքում տարեցները եւ նրանց ընտանիքի անդամները տարբեր կերպ, տարբեր փոխադրամիջոցներով էին տեղափոխվել Հայաստանի Հանրապետության տարածք: Մենք ընտանիքի վերամիավորման գործընթացը սոցիալական աշխատանքի դեպքի վարման տրամաբանությամբ կարողացել ենք ապահովել»,- ներկայացրել է փոխնախարարը՝ հավելելով, որ գործընթացը շարունակվում է:

Նրա խոսքով՝ Ստեփանակերտի գիշերօթիկ հաստատությունում սեպտեմբերի 24-ի դրությամբ բնակվող 10 երեխա սեպտեմբերի 25-ին տեղափոխվել է ՀՀ-ի շուրջօրյա խնամքի հաստատություն

«Մեր ճգնաժամային կենտրոններից մեկում են մինչ օրս բնակվում: Երեխաների տարիքը 1-ից մինչեւ 17 է: Տեղափոխման պահին երկու երեխաներ խիստ անբավարար առողջական վիճակում էին գտնվում: Տեղավորվել են Գորիսի հիվանդանոցում, այնուհետեւ, ամբողջությամբ լավանալու հետ կապված, տեղափոխվել են խնամքի հաստատություն»,-ասել է Ստեփանյանը՝ ընդգծելով, որ բոլոր այն համակարգերը, որոնք կյանքի դժվար իրավիճակում գտնվող տարեցների, երեխաների, հաշմանդամություն ունեցողների համար գործում են ՀՀ-ում, կիրառելի են նաեւ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց դեպքում:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

Կառավարությունը փոփոխություններ է կատարել ուսուցիչների կամավոր ատեստավորման կարգում. 60-69 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչների համար եւս դրույքաչափը կդառնա 200 հազար դրամ: Այդ մասին նոյեմբերի 17-ին՝ կառավարության նիստին, ասաց ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը՝ ներկայացնելով համապատասխան նախագիծը:

Ըստ նախարար Անդրեասյանի՝ կամավոր ատեստավորում անցնելու համար այս տարի դիմել է 6320 ուսուցիչ: Կամավոր ատեստավորման 70 տոկոսից ավելի արդյունք ցուցաբերած ուսուցիչների բարձրացվող դրույքաչափին գումարվում է նաեւ 30-50 տոկոս հավելավճար: Որոշմամբ հնարավորություն է ընձեռվում կրկնապատկել միջինում 125 հազար դրամ դրույքաչափը:

«Որոշման շնորհիվ 3 տարվա արդյունքով 1630 ուսուցիչ եւս կօգտվի վարձատրության բարձրացումից, այդպիսով, կունենանք բարձր վարձատրվող 5179 ուսուցիչ»,- ասաց նախարարը եւ հավելեց, որ քայլեր են իրականացվում, որպեսզի մյուս տարի ատեստավորման գործընթացը թվայնացվի:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով որոշմանը, պարզաբանեց. «Այն ուսուցիչները, որոնք հավաքել են արդեն իսկ տեղի ունեցած եւ առաջիկայում տեղի ունենալիք ատեստավորումների արդունքում 60-69 տոկոս արդյունք, 2023 թվականի հոկտեմբերից, այսինքն՝նախորդ ամսվանից, կստանան դրույքաչափի կրկնապատկում»:

Որոշման նախագծով առաջարկվող փոփոխությունների նպատակը, ըստ վարչապետի, ուսուցիչներին քաջալերելն է, որ նրանք ավելի ակտիվ մասնակցեն ատեստավորման գործընթացին, իսկ նրանք, որ ատեստավորման շեմը անցել են, աշխատավարձի որոշակի փոփոխություն ունենան:

Կառավարության նիստին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ներկայացնելով համապատասխան նախագիծը, նշեց, որ նախորդ երկու ատեստավորումների ժամանակ անցողիկ շեմը չհաղթահարած, բայց 50-59% արդյունք գրանցած կամ առաջինից երկրորդ ատեստավորում 15% աճ ապահոված ուսուցիչներին հնարավորություն կտան երրորդ անգամ մասնակցել ատեստավորմանը:

Նիկոլ Փաշինյանն էլ հայտարարեց, որ այն ուսուցիչները, որոնք նախկին ատեստավորումների արդունքում 60-69 % արդյունք էին ցույց տվել, 2023 թվականի հոկտեմբերից կստանան դրույքաչափի կրկնապատկում:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ՃՏՊ. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏՆԵՑ

ԿԱ ՈՐՈՇԱԿԻ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Կա որոշակի անհամապատասխանություն ԼՂ-ից ՀՀ մուտք գործած եւ գումարներ ստացած մարդկանց թվի միջեւ: Այդ մասին կառավարության նոյեմբերի 17-ի նիստին ասաց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Բացատրությունը կարող է լինել՝

1. այդ արագության մեջ, ենթադրենք, մեքենայի մեջ 5 մարդ է եղել, հաշվառել են 4, այսինքն՝ խնդիր է եղել մարդկանց բաց թողնելու, նրանց առաջնային կարիքները բավարարելու,

2. կարող են լինել մարդիկ, որոնք չեն եղել այդ հոսքի մեջ, ընտանիքի անդամներ են եւ այլն, իրենք ավելի շուտ են եղել ՀՀ-ում, եւ իրենք էլ են հաշվառվել,

3. մարդիկ կարող են լինել, որոնք շատ վաղուց են ՀՀ-ում, բայց որոշել են հաշվառվել եւ գումար ստանալ:

Հիմա մենք պետք է վերլուծենք, ընդ որում՝ այս երրորդ տվյալն օբյեկտիվորեն հնարավոր է պարզել»,- ասաց Փաշինյանը եւ պարզաբանեց, որ այդ տվյալները կարող են վեր հանվել, օրինակ, եթե պարզվի, որ Լաչինի միջանցքի շրջափակման ընթացքում քաղաքացին Հայաստանում, օրինակ, երթեւեկության կանոններ է խախտել, վարորդական վկայական է ստացել, մեքենա է գնել-վաճառել կամ արձանագրվել է որեւէ էլեկտրոնային հարթակում:

«Կլինեն դեպքեր, որ մեր մոտեցումը կլինի այն, որ գումարի ստացումը համարում ենք օրինաչափ: Կլինեն դեպքեր, որ այդպես չենք համարի: Այն դեպքերը, երբ նման դեպքեր կարձանագրվեն, արդեն կմտածենք՝ ինչ անել»,- ասաց Փաշինյանը:

Վարչապետը նաեւ մեկնաբանեց, թե անհամապատասխանությունների դեպքում ինչու է որոշվել առանց տվյալները ստուգելու վճարել 100 հազար դրամ աջակցությունը: Ըստ Փաշինյանի՝ նրանց գտնելու համար անհրաժեշտ էր եւս 15 օր, բայց այդ ընթացքում այն մարդիկ, որոնք պետք է գումարը ստանային, կմնային առանց օգնության:

«Կառավարության որոշման մեջ սահմանել ենք, որ եթե հետո կպարզվի, որ մարդ է ստացել գումարը, որը պետք է չստանար, այդ գումարը ենթակա է վերադարձի»,- ասաց վարչապետը՝ ընդգծելով, որ առաջնորդվել են այն սկզբունքով, որ 100 հազարից ավելի մարդու անհրաժեշտ այսրոպեական օգնությունը չուշացնեն:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ԲԱՑՎԵԼ Է Unisport ԱԿՈՒՄԲԸ

«Յունիբանկ»-ի հովանավորությամբ հիմնադրվել է նոր սպորտային ակումբ՝ Unisport-ը, որը միավորում է տարբեր մարզաձեւերը ներկայացնող պրոֆեսիոնալ մարզիկների:

Unisport ակումբի նպատակն է նպաստել տարբեր մարզաձեւերի առաջխաղացմանը, մարզվելու համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, մանկապատանեկան սպորտի զարգացմանը, ցուցաբերել հասցեական աջակցություն տաղանդավոր մարզիկներին, որոնք Հայաստանը ներկայացնում են միջազգային ասպարեզում:

««Յունիբանկ»-ը հանրության համար ոչ միայն հուսալի ֆինանսական գործընկեր է, այլեւ սոցիալապես պատասխանատու քաղաքացի, որն ակտիվ աջակցում է կրթական, մշակութային եւ սպորտային ծրագրերի իրականացմանը: Դառնալով Unisport ակումբի գլխավոր հովանավորը՝ «Յունիբանկ»-ը ձգտում է իր աջակցությունը տրամադրել մարզիկներին եւ թիմային խաղերի, մասնավորապես, ֆուտզալի առաջխաղացմանը, սպորտի հանրայնացմանը», - նշեց «Յունիբանկ»-ի վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը:

Ակումբին արդեն իսկ միացել են անվանի մարզիկներ, որոնք 2024թ.-ի ամռանը մասնակցելու են Օլիմպիական խաղերին: Unisport ակումբի անդամներ են հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի չեմպիոն եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն Մալխաս Ամոյանը, հրաձգության աշխարհի գավաթի ոսկե մեդալակիր, Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր, Եվրոպական խաղերի արծաթե մեդալակիր ու ռեկորդակիր Էլմիրա Կարապետյանը, հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր եւ Եվրոպայի առաջնության կրկնակի մրցանակակիր Սլավիկ Գալստյանը, ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի եռակի չեմպիոն, աշխարհի եռակի բրոնզե մեդալակիր եւ մինչեւ 23 տարեկանների աշխարհի առաջնության կրկնակի չեմպիոն Արսեն Հարությունյանը, ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոն, Աշխարհի անհատական Գավաթի խաղարկության ոսկե մեդալակիր, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր, աշխարհի մինչեւ 23 տարեկանների առաջնության չեմպիոն Վազգեն Թեւանյանը:

Ակումբի կազմում ընդգրկված է նաեւ Unisport ֆուտզալի թիմը, որը մասնակցում է ՀՀ ֆուտզալի առաջին խմբի առաջնությանը եւ 3-րդ տուրի արդյունքներով գլխավորում է մրցաշարային աղյուսակը:

«Unisport թիմը բավականին բարձր մակարդակով է հանդես գալիս Առաջին խմբում եւ ցուցադրում է գեղեցիկ եւ որակյալ խաղ: Մեր ապագա պլաններում է պայքարել Հայաստանի չեմպիոնի տիտղոսի համար եւ դուրս գալ միջազգային մակարդակ: Մենք ուրախ ենք, որ «Յունիբանկ»-ը մեր կողքին է եւ պատրաստակամ է աջակցել մեր ամբիցիոզ ծրագրերի իրականացմանը», - նշեց Unisport ակումբի տնօրեն Դավիթ Խաչատրյանը:

ՇՈՒԿԱ

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԾԱՐՈՒՆԱԿԻ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանցից 104 200-ն արդեն իսկ ստացել են 100 հազար դրամ միանվագ օժանդակությունը, նրանցից 28 475-ը անչափահաս են, 75 725-ը՝ չափահաս: Այս մասին նոյեմբերի 17-ին ՀՀ կառավարության նիստում այս տվյալները ներկայացրեց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը:

«Այսօր 500 մլն դրամ հատկացնելու ենք այս վճարումները շարունակելու համար: Մշակված է 3 800 դիմում, իսկ 800 նոր անձի դիմում ստացել ենք ԿԳՄՍՆ-ի եւ ՀՀ առողջապահության նախարարության գործընկերներից: Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակումից հետո ՀՀ բուժառության եւ կրթության նպատակներով ՀՀ տեղափոխված ԼՂ մեր հայրենակիցներ մասին տվյալները եւս կմշակենք: Այսպիսով, շուրջ 108 800 անձի վճարում կիրականացնենք առաջիկա օրերին»,- հայտարարեց նախարարը:

Նա հայտարարեց, որ վճարումները շարունակվում են նաեւ 40+10 հազար համակարգով, եւ 99 820 մարդու վճարումն արդեն իսկ իրականացվել է: Նոյեմբերի համար դիմումները նախարարությունն արդեն սկսել է ստանալ, եւ այս պահին նրանց թիվը 8 475 է:

Մկրտչյանը տեղեկացրեց, որ այսօրվանից գործարկվում է էլեկտրոնային հարթակը, որտեղ կներկայացվեն նոյեմբերի եւ դեկտեմբերի համար սպառողական ծախսերի համար հատկացվող 50 հազար դրամ աջակցության մասին տվյալները:

ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ ԵՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում բենզինի շրջանառության ոլորտը: Հանձնաժողովը հստակ իրականացնում է իր գործառույթները՝ ամենօրյա ռեժիմով հետեւելով, որպեսզի բենզինի շուկայում գործունեություն իրականացնող տնտեսվարողների կողմից իրացման գների չհիմնավորված տատանումներ տեղի չունենան:

Հանձնաժողովից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ հանձնաժողովի իրականացրած ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ միջազգային բորսաներում արձանագրվել է բենզինի գների բարձրացում: Հաշվի առնելով ՀՀ տնտեսվարողների լոգիստիկ ծախսերը եւ հարկերը՝ հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ-ում բենզինի գործող գներն արտահայտում են օբյեկտիվ իրականությունը:

Ինչ վերաբերում է այն հարցին, որ, ԵԱՏՄ անդամ այլ երկրների համեմատ, Հայաստանում բենզինի իրացման գներն ավելի բարձր են, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ երկրներում, որոնք, ընդ որում, ունեն բենզինի սեփական պաշարներ, կիրառվում են ներքին շուկայի սուբսիդավորման մեխանիզմներ:

Միաժամանակ հանձնաժողովը մշտական կապի մեջ է գտնվում տնտեսվարողների հետ՝ նրանցից ստանալով օպերատիվ տեղեկատվություն: Հարկ է նշել, որ գների բարձրացմանը զուգահեռ տնտեսվարողները նվազեցրել են իրենց շահույթը՝ նպատակ ունենալով ստեղծված պայմաններում հնարավորինս մեղմել գների ավելացումը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՊԱՏՄՈՒՄ Է

ԱՐՑԱԽՅԻ ԿՆՈՋ ՀՈՒՇԵՐԸ

«Ամսի 24-ին վերջապես ամուսինս ու եղբայրներս եկան. նույն օրը, բթացած ցավը կոկորդներումս խեղդելով, հեռացանք Արցախից՝ այնտեղ թողնելով ամեն ինչ՝ մանկություն, հայրական տուն, մի ողջ ապրած կյանք ու մեր սուրբ հայրենիքը»,-«Ժողովուրդ» օրաթերթին պատմում է Արցախից բռնի տարհանված Աքսաննա Մաթեւոսյանը:

«Սեպտեմբերի 19-ին ամուսինս ու 3 եղբայրներս դիրքերում էին, ոչ մեկից լուր չունեինք. պատերազմի հաջորդ օրը հայտարարեցին, որ պետք է լքենք գյուղը: Երեք անչափահաս երեխաներիս հետ մի կերպ բարեկամի մեքենայով դուրս եկանք գյուղից եւ գնացինք Ստեփանակերտ: Վերջին օրերին բոլորն այնտեղ էին կենտրոնանում, եւ մտածում էինք, որ Ստեփանակերտում ավելի ապահով է: 6 օր մնացինք Ստեփանակերտի թիվ 1 դպրոցում, որտեղ տեղակայված էր հիմնականում Մարտակերտի շրջանը՝ իր գյուղերով: Ծանր րոպեներ էին, երեխաները քնում էին սառը հատակին, իսկ մենք սպասում էինք, ինչի՝ ինքներս էլ չգիտեինք: Մտածում էինք ընտանիքի անդամների մասին. միայն թե մեզանից ոչ մեկը չպակասի»,- վերհիշում է Աքսաննա Մաթեւոսյանը:

Այսօր փորձում են նոր կյանք սկսել, ապրում են Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղում: Մինչեւ մշտական աշխատանք գտնելը Աքսաննան որոշել է տնային պայմաններում ժենգյալով հաց եւ փախլավա թխել՝ ինչ-որ չափով հոգալով ընտանիքի հոգսերը:

Աքսաննան եւ ամուսինը՝ Հայրոն, ծնունդով Հադրութից էին: Համալսարանն ավարտելուն պես աշխատել են Հադրութի շրջանի Առաքել գյուղում, ինքը՝ որպես դասվար, ամուսինը՝ պատմության ուսուցիչ: Աքսաննան հստակ հիշում է՝ երբ, որ օրն ինչ է տեղի ունեցել. «Վարձով էինք ապրում մինչեւ 2020 թվի հուլիսի 11-ը, հետո տուն գնեցինք, միահամուռ ուժերով կահավորեցինք, գնեցինք տան համար բոլոր անհրաժեշտ իրերը, որոնք անգամ չհասցրեցինք բացել, երբ սկսվեց 44-օրյա պատերազմը: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ամուսինս ինձ ու 2 փոքրիկներիս ընկերոջ մեքենայով ուղարկեց Հադրութի իբր ապահով գյուղեր (Քարագլուխ, Դոլանլար, Խծաբերդ), իսկ ինքը մնաց Ջրականի (Ջաբրաիլի) մոտակայքում: Հոկտեմբերի 1-ին ճանապարհվեցինք Երեւան, իսկ ինքը մինչեւ նոյեմբերի 26-ը մնաց Խծաբերդում... Պատերազմի ավարտից հետո ամուսինս որոշեց, որ պետք է ապրենք Արցախում: 2020 թվականի դեկտեմբերի 3-ին արդեն իմ հայրենի գյուղում՝ Հաթերքում էինք: Ամուսինս անցավ ծառայության: Երբեք չէինք խուսափում դժվարությունից, իրար օգնելով՝ սկսեցինք ամեն ինչ նորից ստեղծել:

Անգամ բլոկադան մեզ ընկճել չկարողացավ, բայց այս պատերազմի հետեւանքները...»:

ԱՐՑԱԽՅԱՆ

ՋՈՀՎԱԾԻ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԵՐԸ

Սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետեւանքով Արցախում առկա խնդիրներին ավելացել էին նորերը: Կտրվել էր կապը շրջանների հետ, թշնամին վերահսկում էր միջշրջանային ավտոճանապարհների մի մասը: Սկսվեց բնակչության տարհանումը Հայաստանի Հանրապետություն:

9-ամսյա շրջափակումից հետո Արցախում վառելիքի սղության պատճառով շատերն այդ օրերին փորձում էին տարբեր տեղերից վառելիք գտնել: Մարդկանց մի մասը մեկնեց Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհի հարակից տարածքում գտնվող վառելիքի պահեստ:

Դեռ չպարզված հանգամանքներում սեպտեմբերի 25-ին պայթեց վառելիքի պահեստը, ինչի հետեւանքով եղան զոհեր եւ վիրավորներ:

«Սեպտեմբերի 19-ի ռազմական գործողությունների մեկնարկից մինչեւ սեպտեմբերի 24-ը Ռադիկը դիրքերում էր: Սպետմբերի 25-ին, լսելով, որ Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհի հարակից տարածքում գտնվող վառելիքի պահեստում բենզին կա, շտապեց այնտեղ: Երեկոյան արդեն իմացանք պայթյունի մասին»:

Ռադիկի կինը՝ Մարիամը, լսելով պայթյունի մասին, շտապեց հիվանդանոց: Ամուսինը Ստեփանակերտի Հանրապետական բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում էր այդ ժամանակ: Չթույլատրեցին տեսակցել: Քիչ հետո զանգեց Ռադիկը եւ վստահեցրեց, որ իր հետ ամեն ինչ նորմալ է:

Հաջորդ օրն ուղղաթիռով տեղափոխել են Երեւան. «Ծանոթ մարդկանց տեսնելիս Ռադիկը պատմում էր, որ պայթյունի հետեւանքով կարծես թե կլինիկական մահ էր տարել, որի ընթացքում լսել է Մարիամի աղոթքները, որից հետո զարթնել է»:

Ռադիկ Խաչատրյանի մարմնի 70 տոկոսը այրված էր: 4 օր պայքարեց ապրելու համար, սակայն ստացած այրվածքները կյանքի հետ անհամատեղելի էին:

ԿՑՈՒՑԱԴՐՎԻ ԱՄՆ-ՈՒՄ

Ավստրալական SBS ցանցը բացառիկ իրավունքներ է ստացել ցուցադրելու ռեժիսոր Ջիվան Ավետիսյանի «Դրախտի դարպասը» ռազմական դրաման, որտեղ գլխավոր դերերում հանդես են գալիս Ռիչարդ Սամելը եւ Տատյանա Սպիվակովան: Ֆիլմի իրադարձությունները զարգանում են 2016 թվականին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած քառօրյա պատերազմի ֆոնին: «Դրախտի դարպասը» ֆիլմը ներկայացնում է Արցախյան պատերազմն ու դրա շուրջ համախմբված հերոսների կյանքը, գլխավոր հերոսի մեծագույն սխալն ու այն ուղղելու մեծ ցանկությունը: Իրադարձությունները զարգանում են 2016թ.-ի ապրիլին: Գերմանացի հայտնի լրագրող Ռոբերտը վերադառնում է Արցախ 22 տարվա զինադադարից հետո կրկին բռնկված պատերազմի իրադարձությունները լուսաբանելու ցանկությամբ:

ՍՊՈՐՏ

ԴԱՐՁԱՎ ՈՍԿԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հայաստանի ծանրամարտի երիտասարդական ընտրանին առաջին մեդալն է նվաճել աշխարհի առաջնությունում:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ մեքսիկական Գվադալախարա քաղաքում ընթացող աշխարհի երիտասարդների առաջնության կանանց 55կգ քաշային կարգում Հայաստանի հավաքականի անդամ Ալեքսանդրա Գրիգորյանը դարձել է ոսկե մեդալակիր: Նա պոկել է 81 կգ եւ հրել 107 կգ:

Երկամարտի 188 կգ արդյունքով Գրիգորյանը դարձել է ԱԱ-ի ոսկե մեդալակիր:

ՎՆԱՍՎԱԾՔ Է ՍՏԱՑԵԼ

Անգլիական «Մանչեսթեր Սիթիի» 23-ամյա հարձակվող Էրլինգ Հոլանդը ոտնաթաթի վնասվածք է ստացել Նորվեգիայի հավաքականում. հաղորդում է VG-ն: Ֆարերյան կղզիների հետ ընկերական խաղում Հոլանդը փոխարինման է դուրս եկել եւ վնասվածքը ստացել հանդիման ավարտից մի քանի րոպե առաջ:

Նորվեգիայի հավաքականը հաղթել էր 2:0 հաշվով:

Նորվեգիայի հավաքականի բժիշկ Օլա Սանդան հայտնել է, որ Հոլանդը նույն վնասվածքը ունեցել է նաեւ նախկինում:

Ընթացիկ մրցաշրջանում Հոլանդը «Մանչեսթեր Սիթիի» հետ մասնակցել է 18 հանդիպման, խփել է 17 գոլ, կատարել 4 գոլային փոխանցում:

ԿԱՆՑՆԵՆ ՄՐՑԱԽԱՂ

Ֆուտբոլի Հայաստանի եւ Ուելսի հավաքականների երկրպագուները ֆուտբոլային մրցախաղ կանցկացնեն Երեւանում:

Նոյեմբերի 17.ին՝ ժամը 19:30-ին, Խորեն Հովհաննիսյանի անվան (Հանրապետական մարզադաշտին կից) մարզադաշտում տեղի կունենա բարեգործական ֆուտբոլային հանդիպում FAF-ի եւ Ուելսից ժամանող երկրպագուների՝ Wales supporters team-ի միջեւ, որի ամբողջ հասույթը ուղղված կլինի Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների շարունակական կարիքները հոգալու աշխատանքներին:

«Եվրո-2024»-ի ընտրական փուլի նախավերջին տուրի Հայաստան - Ուելս հանդիպումը տեղի կունենա նոյեմբերի 18-ին եւ կմեկնարկի 18:00-ին:

ՍԱԼԱՀԸ՝ ՊՈԿԵՐԻ ՀԵՂԻՆԱԿ

Աֆրիկայում մեկնարկեց 2026թ. աշխարհի առաջնության ընտրական մրցաշարը:

Եգիպտոսի հավաքականը հյուրընկալեց Ջիբութիի հավաքականին եւ առավելության հասավ 6:0 հաշվով:

Չորս գոլ խփեց անգլիական «Լիվերպուլի» հարձակվող Մոհամեդ Սալահը:

● *Նոյեմբերի 19-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Վերջին կանգառ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Այն դեպքում, երբ կատարվում է ավանդի ներդրում կամ համալրում, որոնցից յուրաքանչյուրի գումարը չի գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը, սակայն համալրման արդյունքում ավանդի գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, արդյոք անհրաժե՞շտ է Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնել պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն:

Հայկ Բաղդասարյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե 20 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող ավանդը համալրվում է 20 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարով, եւ եթե արդյունքում նույնիսկ ավանդի գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, ապա անհրաժեշտ չէ ներկայացնել պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվություն: Այդուհանդերձ, նման ձեւով համալրված եւ 20 միլիոն ՀՀ դրամը գերազանցող ավանդի մարման կամ հաճախորդի կողմից գումարի ստացման դեպքում անհրաժեշտ է Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնել պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվություն:

ՀՀ ԿԲ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվություն չի ներկայացվում նաեւ այն դեպքերում, երբ նախկինում համալրված՝ 20 միլիոն ՀՀ դրամը գերազանցող ավանդի պայմանագրի ժամկետը երկարաձգվում է:

ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքերում է քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրամադրվում տարկետում:

Հովսեփ Առաքելյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք չունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է առողջական վիճակի պատճառով:

ՀՀ ՊՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք չունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաեւ ընտանեկան պայմաններից ելնելով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Վաղ առավոտից Քաջազնունի-Վրացյան խաչմերուկը լիքն է քաղաքացիներով, պարեկներով: Պատճառը փոսն ընկած մեքենայի վնասված վիճակն է:

Զգուշացման նշանի եւ համապատասխան ժապավենի բացակայության պատճառով քաղաքացու մեքենան հայտնվել է փոսում: Ներկաների խոսքով՝ սա առաջին դեպքը չէ այսօրվա մեջ, մի քանի մեքենաների հրելով դուրս են հանել փոսից, սակայն այս մեկը հանել հնարավոր չի եղել, քաղաքացին շուրջ 3 ժամ սպասել է պատասխանատու կողմի արձագանքին, սակայն անարդյունք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________________
Ազգանուն՝ ____________________
Առաքման հասցե՝ ____________________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	-1 +2 / +6 +9
Կոտայքի լեռներ	0 +3 / +5 +7
Կոտայքի նախալեռներ	+4 +7 / +11 +13
Գեղարքունիք	-1 +3 / +5 +9
Լոռի	+1 +6 / +11 +14
Տավուշ	+3 +8 / +13 +17
Արագածոտնի լեռներ	-1 +2 / +5 +9
Արագածոտնի նախալեռներ	+5 +8 / +10 +14
Արարատ	+8 +11 / +12 +15
Արմավիր	+7 +10 / +12 +15
Վայոց ձորի լեռներ	0 +3 / +6 +9
Վայոց ձորի նախալեռներ	+6 +8 / +12 +15
Սյունիքի հովիտներ	+6 +10 / +16 +19
Սյունիքի նախալեռներ	0 +3 / +11 +14
ԼՂՀ	+6 +8 / +11 +14
Երեւան	+7 +9 / +16 +18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*